

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

# ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 րուր, կէս տարեկան 6 րուր:

Առանձին նամակները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրգում են միմյանց խմբագրատան մէջ:

Ոտարարադարացիք գիտում են ուղղակի

Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի եւ տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունելու է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են  
իրարանշխար քաղիւն 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մեծ-Ղարա-  
քլիսից, Նամակ խմբագրին, Նամակ խմբագրին,  
Նամակ խմբագրին, Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա: Գերմանիա: Անգլիա:  
Պէտք է իրար ճանչնանք: Արտաքին լուրեր:—  
ՀՆՈՒՄԵՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՄԵՏ-ՂԱՐԱՔԻՒԹԻՍԻՑ

Նոյեմբերի 4-ին

Ի՞նչ աշուշտ չանցած՝ սարսափառիթ ձիւնը  
անկող հիւրի բաղդն ունեցաւ մեր Ղարաքլի-  
սում. նա անցնալ ամսի 25-ին կէս արշին բարձ-  
րութեամբ ուղիտակացրեց փամբակի բարձրաւն-  
դակ սարերն ու դաշտերը:

Մեր ժողովուրդը վառելափայտի կողմից յու-  
սահանքութեան մէջ է. Անտառապետը մերձակա  
անտառներէն թէ վճարով և թէ առանց վճարի  
հրաման չէ տալի ոչ միայն եղ ունեցողներին,  
այլ և չունեցողներին. նրանց հրաման խնդրե-  
լու ժամանակ, նա ցոյց է տալիս «Բուռնոր»  
կոչված անդունդը, որտեղից ոչ միայն անջնար  
է փայտ բերելը, այլ և անկարելի է այդ ձորից  
անջնալ դուրս գալը: Իրեցուք թէ հարուստները  
կարողացան իրենց գլխի ճարը տեսնել, հասա-  
րակ դառնը, եղ և ձի չունեցողները ի՞նչ պէտք  
է անեն: Պ. անտառապետը մի քանի մասնաւոր,  
ապստամբաւոր մարդկանց հետ թշնամացած  
լինելով, հասարակ դասին էլ նրանց հետ  
խառնում է: Մի քանի տարի սրանից առաջ  
փայտի սալը արժէր 1—2 ր., իսկ այժմ ծախ-  
վում է 6—7 ր.: Տեղական զինուորների վառե-  
լափայտը հասարակութիւնն է տալիս, սակայն  
փայտ չունենալու համար, ստիպված է լինում  
իր գոմ ու մարգը քանդելով՝ զինուորների պա-  
հանջը կատարել: Մի խօսքով փայտ չունենալու  
ցաւը անտանելի է դարձած:

Յիրաւի, անդգայ մարդիկ շատ ենը լսած և  
տեսած, բայց մեր հողարարներին նմանը՝ ոչ  
երբէք, որոնք ամբողջ չորս տարվայ ընթացքում  
չը կարողացան ամենակարեւորը—հարկաւորաւոր-  
զին չինել. տալի ճշմարտ, այնքան գրվել և  
խօսացվել է դրա վերաբերութեամբ, որ մարդ  
զղուել է այդ մասին գրիչ վեր առնել, այսու-  
ամենայնիւ, անկարելի է նորից չը դարձնել  
այդ՝ կարծես եւրօպական խնդիր դարձած հար-  
ցը՝ երբ տեսնում և լսում են, որ խեղճ ութ-  
ամեայ մանուկները կէս արշին բարձրութիւն  
ունեցող ձիւնի վրա են բնական պէտք կատա-  
րում:

Մեր գիւղի տանուտէրը բոլորովին անհամա-  
պատասխան է իր կույմանը. նա իր գործերը բարձի  
թողի արած՝ իր բարեկամի մօտ է պարապում,  
Գարեանը անտառապետի և հասարակութեան  
մէջ տեղի ունեցած վէճի մասին, տանուտէրը  
հասարակութիւնից մօտ 600 ր. փող ժողովից  
փաստաբանով գործը առաջ տանելու համար,  
սակայն այդ փողերը իրանց նպատակին հասած  
չեն և չը գիտենք որտեղ են, ում մօտ են կամ  
ի՞նչու հաշիւ չէ տալիս հասարակութեանը:

Անցնալները մեր գիւղացիք գաւառապետի  
հրամանով 25—30 սածէն փայտ տարան Ալէք-  
սանդրապօլ, որոնք ի հարկէ անվարձ չլին-  
դրանց փողերը տանուտէրը գնացել է և ստա-  
ցել, այժմ հասարակութեանը մի կոպէկ չէ ցոյց  
տալի. հասարակութիւնը ամեն օր քորնջում է  
դրա բռնած ընթացքի վրա, սակայն չը կայ մի  
այնպիսի արխայրո՝ պարագլուխ՝ որ գլուխ  
բարձրացրած հասարակութեան բերանով, հաշիւ  
պահանջի նրանց:

Բկացաւ հիւանդութիւնը անդթաբար հնձում է

մեր գիւղի մանուկներին. կէս տարի չէր լինի  
որ այդ ցաւը հեռացել էր մեր գիւղից, սակայն  
այժմ կրկին ոտք կոխած՝ տանում է օրը 2—3-ին.  
Թէև մեր գիւղում բժիշկներ շատ կան, բայց  
նրանցից նախապաշարված ժողովուրդը չէ օգտ-  
վում. շուտով հիւանդանոցը կը վերջանայ՝ և  
կը մնայ լազարէտը. ուրեմն կը հեռանան և  
բժշկները (բացի մէկից). այն ժամանակ անխ  
կը քաշենք, բայց ուշ կը լինի:

### ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳԻՆ

Թիֆլիս, 4 նոյեմբերի

«Մշակ» № 205-ում յայտարարութիւնների  
մէջ կարգացրեք Գեորգեան ճեմարանի իշխու-  
թանուցումը, որով պ. իշխուորը յայտնում է հայ  
հասարակութեան ճեմարանի ուսումնական խոր-  
հրդի վէճում՝ հայոց բոլոր դպրոցների համար  
մի որոշ ծրագիր կազմել և հրաւիրում է դպրո-  
ցական վարչութիւններին ուղարկել ճեմարանի  
ուսումնական խորհրդին իրանց ծրագիրները  
կամ յայտնել իրանց հայեացքները այդ հարցի  
մասին:

Այդ ծանուցումը մենք գտնում ենք շատ  
տարօրինակ. ահա թէ ինչու.—Ազգային ուսում-  
նարանների համար մի ընդհանուր որոշ ծրագիր  
կազմելը ինքն ըստ ինքեան այնքան մի մեծ  
գործ է, որքան աննշան է Գեորգեան ճեմարանի  
ներկայ ուսումնական խորհուրդը... զիցուք թէ  
ամեն տեղերից դպրոցական վարչութիւնները և  
ազգային լուսաւորութեան ասպարէզում գործող  
անհատները ուղարկեցին իրանց ծրագիրները և  
յայտնեցին իրանց կարծիքները գրաւոր կերպով.  
բայց ով արդեօք կարող է երաշխաւորել, որ  
այդ կարծիքները պէտք է ուշադրութեան առ-  
նվեն... ով կերաշխաւորէ, որ դրանք լոկ  
անուան համար չեն լինի և հայոց ուսումնարան-  
ների ընդհանուր ծրագիրը կազմված չի լինի  
քանի մի անձանց քննի և կամայականութեան  
համաձայն...:

Իրեցուք թէ Գեորգեան ճեմարանի ուսումնա-  
կան խորհուրդը և ուշադրութեան առաւ վերա-  
յիշեալ ծրագիրները և հայեացքները, բայց և  
այնպէս դա պէտք է լինի կամայականութիւն և  
դարձեալ խնդիր կը վճռվի խորհրդի անդամների  
քմեր համաձայն, որովհետև նրանք անձանք են  
զանազան գաւառների ժողովրդի, նրա պէտքերի,  
պահանջների և բնաւորութեան հետ, ուրեմն ինչ-  
պէս կարող են քննել, չընդունել այս կամ  
այն, որից իրանք բոլորովին տեղեկութիւն չուն-  
են... չէ որ, ինչպէս վերը ասացինք, դա մի  
այնպիսի գործ է, որ չէ կարող զուգ-  
աւ ճեմարանի մի ուսումնական խորհու-  
րով...:

Այստեղ ակամայ հարց է դարձում. ուրեմն  
ինչու համար է կազմակերպվում շուտեցական  
ընդհանուր ժողովը, եթէ այդ չէ նրա գործը  
հապա ինչ է. միթէ հայոց ուսումնարանների  
բոլոր գործիչները մի ճեմարանի խորհուրդ չար-  
ժեն... Մենք կարծում ենք, որ այդ մի մասնա-  
ւոր խորհրդի գործ չէ, թէկուզ նա ամենաբարձր  
համալսարանի խորհուրդ լինէր, մենք խորհուրդ  
չենք տալ մեր դպրոցական վարչութիւններին  
մի այդպիսի քայլ անել, որով հայոց ապագայ  
ընդհանուր ուսուցչական ժողովը զո՛ր կերթայ  
Գեորգեան ճեմարանի խորհրդի (կամ աւելի լաւ  
պետեանի) փառամոլ նպատակներին... դա մեր  
ապագայ ուսուցչական ընդհանուր ժողովներին  
մահաթիթ զարկ կը տալ, նրա նշանակութիւնը  
միայնակ զարկ կը տալ, նրա նշանակութիւնը  
բոլորովին կը կտարվի... միթէ ճեմարանի այդ  
ուսումնական ժողովը չէ հասկանում, որ ապա-  
գայ ժողովում բոլոր հայ ուսումնարանների  
խորհուրդները, ուրեմն և իրանք կարող են  
ազատ դատել, վիճել, այդտեղ կը յայտնվեն  
գործին աւելի նպաստաւոր հայեացքներ և իւրա-

քանչեւրը կարող է պայտպանել իր կարծիքը...  
Այն ժամանակ միայն այդ ծրագիրը կը լինի մի  
հիմնաւոր, զուգէ և իսկապէս մեր պահանջներին  
համապատասխան, քան որ և է խորհրդի նկազ-  
մածը:

Լ.մանուէլ

### ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳԻՆ

Բագու, 31 նոյեմբերի

Կարգաւով ձեր հրաւերը վիճենայում հրատա-  
րակվող «Ժողով» լրագրին գրվելու,  
որ պաշտպան է հանդիսանում հայոց հարցին,  
սկսեցի բանալ ստորագրութիւն այստեղի հայե-  
րի մէջ, որոնցից ոչ մին յետը չեն մնացել այդ  
բարի գործի մէջ, բացառութեամբ մի քանիսի,  
որոնց համար արժաթը շատ աւելի քաղցր է,  
քան Հայաստանը իր համայն բնակիչներով:

Մի կողմից այդպիսիներին այնքան մեղադրել  
չէ կարելի, որովհետեւ եթէ մի քննական հայեացք  
են ձգում դոյա վրա, համարում են այն եղբայրա-  
ցութեան, որ նույն ոչ տեսել են, ոչ էլ սովոր  
են մի որ և է բարի գաղափար կազմել ազգու-  
թեան վրա. այդպիսիների սրտերը ապուստի  
նման են, բայց ևս համոզված են որ և այդպիսի  
սիրտ ունեցող հայերն անգամ, երբ տեսնեն չօ-  
շափելի արդիւնք ամեն մի նուիրատուութիւնների,  
ստիպված և իրանք սիրտ կտանեն, կը սովորեն  
և կը թան:

Ահա բաժանորդների ազգանունները, որոնցից  
շատերը տուել են աւելի քան թէ վիճենայի լը-  
րագրի բաժանորդական տարեկան վճարը. Ընդա-  
մենը գոյացել է 543 րուրը գումարը, Գեորգ Լա-  
յանց, Գեորգ Միրզաբեկեանց, Торговый домъ  
Тареева и др. Сарисовыхъ, Արտէմ Իվանիչ Ա-  
լիբեկեանց, Մեքո Միրզայեանց, Միկիտ Դանկե-  
տեանց, Խորէն քահանայ Միրզաբեկեանց,  
Յովհաննէս Ասրիբեկեանց, Յովհաննէս Բ. Բա-  
բախանեանց, Ամբակում Խ. Վերմիլեանց, Խման  
Բ. Պատուականեանց, Միխայէլ Եւանգելեանց,  
Գրիգոր Միրզայեանց, Գարութիւն Գարանեանց,  
Ասրիբաբայ Դանկաբեկեանց, Առաքել Դատու-  
րեանց, Վառլիկ Է. Պողոսեան, Եգոր Սարուխ-  
անեանց, Սահակ Գ. Խաչատուրեանց, Յովհաննէս  
Է. Պողոսեանց, Նիկողայ Վարդապետեանց, Սա-  
մուէլ Թարազդարեանց, Սամուէլ Բաղիրեանց,  
Ներսէս Սարուխանց, Ներսէս Կրասիլնիկեանց,  
Աւետիս Օսէփեանց, Գրիգոր Գրիգորեանց, Գրի-  
գոր Թումանեանց, Գարէթ Տէր-Բակոբեանց, Ա-  
ւագ Անտոնեանց, Պետրոս Խ. Բաղիրեանց, Գեորգ  
Գրիգորեանց, Համբարձում Սարուխանեանց,  
Մանուէլ Գարութիւն Սանամեանց, Աւան Աղա-  
ջանեանց, Սարգիս Թատամեանց, Աւագ Պողո-  
սեանց, Վազար Պողոսեանց, Զաքարիա Տէր-Պետ-  
րոսեանց, Գրիգոր Ս. Աղամալեանց, Իրաւամ  
Սարուխանց, Գրիգոր Դանկեանեանց, Գալոօր  
Ս. Աղամալեանց, Աղաջան Դիւղարեանց, Ինգէլ  
Վարդանեանց, Աւետիս Վարաբեկեանց, Յովհան  
Վարդիգուլեանց, Գրիգոր Միրզապետեանց, Բող-  
դարիկ Սարգսեանց, Բուրէն Տէր Գալոբեանց,  
Սամուէլ Յովհաննէսեանց, Մնացական Առաքել-  
եանց, Գալոօր Խաչատուրեանց, Սիմէոն Աղու-  
լեանց, Գալոօր Մայիլեանց, Գասպար Բալա-  
յեանց, Եսայի Ա. Արուսեանց, Բալասի Գրիգո-  
րեանց, Գեորգ Զաքարեանց, Բալասի Պապի-  
կեանց, Հայրապետ Գուրգենեանց, Գարութիւն  
Բուշանեանց, Լիթանէս Գասպարեանց, Սամոն  
Մարտիրոսեանց, Խաչատուր Միլիք Դաշայեանց,  
Նիկողայ Բ. Բահմբեանց, Խաչատուր Բովա-  
նեանց, Առաքել Քաղապետեանց, Միրզա Բաբա-  
յեանց, Վալիկեանց Ալեքսանդր, Աստուածատուր  
Միլիկեանց, Սաղաթէլ Թաղեանց, Ա. Անա-  
նեանց, Պողոս Միրզայեանց:

Յանկանում են ստանալ վիճենայի լրագիրը մի  
քանի անձինք, որոնց առջև նամակում խաչ է դր-  
ված և բացի ստանդի խնդրումներ «Ժողով»  
լրան» լրագրի խմբագրին ուղարկել այդ փողով  
իր լրագիրը հետեւալ տեղերին. Դամասու հայոց  
գրագրանին, Նուխու հայոց ուսումնարանին,  
Շուշու հայոց դպրոցին, Գանձակի հայոց ուսում-  
նարանին և Դէրբէնդի հայոց օրիորդաց դպրոցին:  
Գեորգ Լալայեանց

### ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳԻՆ

Թիֆլիս, նոյեմբերի 6-ին

Թէպէտ ես միտք չունէի պատասխանելու  
«Մշակ» № 201 մէջ տպված յօդուածին, որ  
գրել էր չքաւոր աշակերտների վերաբերութեամբ  
Գ. Խաչատուրեանը, իբրեւ պատասխան իմ նամա-  
կին («Մշակ» № 196), որովհետեւ արդէն նա-  
մակիս դուրս եկած օրից, երբ նա մօտեցաւ ինձ  
և խնդրեց բացատրել նամակիս միտքը, շատ  
լաւ գիտէի թէ ինչ է եւ ուղեց եւ ասել և ում  
եւ առաջարկել հոգալ մի բարեգործա-  
կան ընկերութիւն հիմնելու մասին:  
Կրկնում եմ, թէպէտ միտք չունէի պատասխա-  
նելու, բայց այժմ միտքս փոխելով պատասխա-  
նում եմ, որովհետեւ Գ. Խաչատուրեանի յօդուածը  
շատացրեց այն անձանց թիւը, որոնց ևս պէտք  
է բացատրել: Իմ առաջիկայ նամակի միտքը մօ-  
տաւորապէս այս է. խօսելով Թիֆլիսի հասարա-  
կութեան մինչև հիմա ցոյց տուած անտարբերու-  
թեան մասին չքաւոր աշակերտների հարցի վե-  
րաբերութեամբ, յետոյ ասում եմ՝ արդե՞ք այս  
անգամ ինչպէս պէտք է վերաբերվի այս հարցին  
Թիֆլիսի պատուէլի հասարակութիւնը: Հար-  
ցիս ուրիշ արդէն երևում է, որ այս անգամ յոյս  
ունենմ, որ Թիֆլիսի պատուէլի հասարակութիւ-  
նը կը հոգայ և առաջիկայ նման անտարբեր չի  
մնայ: Այսպէս յոյս գնելով Թիֆլիսի հասարա-  
կութեան վրա, յետոյ գտնում եմ այստեղ ու-  
սում առնող չքաւոր աշակերտների ծնողներին,  
յայտնելով նրանց որդից դուրսբերել և առա-  
ջարկելով, որ նրանք էլ գտնէ անտարբեր չը  
մնան, որ նրանք էլ հոգան իրանց կարեաց  
չափ մի բարեգործական ընկերութիւն հիմնե-  
լու մասին: Սրանից երևում է, որ բացի Թիֆլի-  
սի հասարակութիւնից, որի վրա զիջաւոր յոյսս  
գտնում եմ, ցոյց եմ տալիս և ուրիշ քաղաքների  
հասարակութիւնների վրա, որոնք ևս կարող են  
այս հարցի իրազորվելու մասին իրանց կա-  
րեաց չափ հոգալ: Չէ որ եթէ նրանք էլ մի  
կողմից հոգան, այն ժամանակ հարցը աւելի մեծ  
նշանակութիւն կը ստանայ և հետեւաբար աւելի  
շուտ կիրաւորվի: Իսկ թէ ինչու եմ միայն չը-  
քաւոր աշակերտների ծնողներին գրմել, պատ-  
ճառը շատ հասարակ է՝ նրանք միւսներին աւե-  
լի կը հոգան—իրանց որդից համար է այդ իմ  
կարծիքով Գ. Խաչատուրեանի սխալը նրանից է  
առաջ եկել, որ չէ ուղեցել հասկանալ թէ ինչ  
կապ ունեն միմեանց հետ նամակիս մօտերը,  
այլ վերցնելով նամակիցս միայն մի նախադա-  
սութիւն, որի առաջին բառն էլ դեռ ուրիշ  
նախադասութիւնից է պոկել և այդ մի ութ  
բառից դուրս է բերել ամբողջ նամակիցս միտ-  
քը: Երկրորդ, նրա կարծիքով արարանցի երկ-  
րագործը և նույնի չափայ ծախողը միշտ լը-  
րագիրներ են կարդում, որոնց եւ առաջարկած  
լինում հոգալ մի ընկերութեան հիմնելու մասին:  
Այդպիսիները, յայտնի է, որ իրանց որդից  
չեն ուղարկում Թիֆլիս ուսում ստանալու, նը-  
րանք մեղանում դեռ չեն հասկացել ուսման նը-  
շանակութիւնը, ուրեմն և նրանց վրա խօսք էլ  
չունենալով: Այլ այստեղ խօսքս այն չքա-  
ւոր աշակերտների ծնողներին վրա է, որոնք ի-  
րանց ստացած մասնաւոր (երբեմն բաւականին)  
ուսման շնորհիւ, կարողացել են հասկանալ նրա  
նշանակութիւնը և այսպէս ուղարկել են իրանց  
որդիցն էլ ուսման: Սրանք, պարզ բան է, մեծ



դեր կարող են խաղալ իմ առաջարկած հոգացողութեան մէջ—այս միայն չեն խնայել իրանց միջոցները կողմէն էլ, այլ և կը զորեն իրանց միջին (համաքաղաքացի) հարուստներին, ուսումնականներին և այլն: Միթէ այս պակաս հոգացողութիւն կը լինի վերջապէս նկատողութեան արժանի է և այն, որ այդ չքաւոր ուսում առնող աշակերտներին ծնողներին կարելի է անուանել չքաւոր, թիֆլիսացոց հետ համեմատելով միայն, իսկ թէ այնպէս նրանք ունեւորներ են կոչուած իրանց տեղում: Եւ այս ունեւորներ են միայն, որ ուղարկուած են իրանց որդոցը հեռու քաղաք ուսման համար: Բացառութիւն կազմողներ մեզանում համարեալ թէ չեն լինում:

Սիմ. Տեր-Գրիգորեանց

ԴԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր Կ. Պօլսի թղթակիցը մեզ գրում է. «Մանկունու ձեռքով Լիմաթին կանչուած Մամուլ լրագրի նախկին խմբագիր Թիւրքմէնյանց, կարծեմ արդէն սկսել է իր պաշտօնը վարել: Նրան են վերաբերում այն նամակները որ սկսեցին երեւոյ շատունի օրգան (Թիւրքմէնյանի Լիմաթ) լրագրի մէջ, որտեղ ամբողջ սխալներ են նուիրուած Մանկունու գովաբանելուն: Լաւ միջոցի է դիմել Մանկունին իր վարկը Կ. Պօլսի մէջ բարձրացնելու: Բայց այն էլ պէտք է ասած, որ Թիւրքմէնյանի Լիմաթիւր ստոր լրագրի մէջ մէկի համար գովաբանեց ճաշատար է անարդանքին:»

ԲԱՎՈՒՆԻՑ մեզ գրում են. «Բագու-Թիֆլիսեան երկաթուղու ժամանակաւոր գնացքը հասնում է մինչև Քիւրդամիր կոչուած գիւղը: Շոգեմեքենայի երթմանութիւնը մեծ քանակութեամբ է պատճառուած չրջակայ բնակիչներին, ինչպէս մօտակայ գիւղացիներին, այնպէս էլ գծի վրա բանող արհեստաւորներին: Շոգեմեքենան անցնելով մի կայարանի մօտով, քարոց իր անխնայ ասկ 15 ուշխար, մի այլ տեղ մի ուղտ է սպանել, վերջապէս շատ ժամանակ չէ սպանվել են և երկու խեղճ բանուորներ և կոնդուկտօրը ծանր կերպով վիրաւորվեց: Մեղաւոր են մեքենայետները, որոնք մեծ մասամբ հարբած են լինում և նշանել: չեն տալիս գծի վրա անցնելու ժամանակ: Բանուորների մէջ, որոնք կողմասի այլ և այլ տեղերից եկած են, բայց մանաւանդ Ղարաբաղի կողմերի հայերն են, սաստիկ տարածված է սիֆիլիսական ախտը: Խիտ կերպով միասին բնակվելով, շատ անգամ վրանների տակ, նրանք փոխադարձապէս վարակվում են այդ ախտով իրանց նեղ և անյարմար համակցութեան շնորհով: մի և նոյն ամաններից ուտելով ու խմելով:»

Մեզ հաղորդում են ՕՐԻՈՒՐԱՒԻՑ, որ Լիւնանի նահանգապետը նորերումս այցելեց Օրդու-բաթ քաղաքը: Ժողովուրդը մեծ յոյս ունի որ նորին գերագնացութիւնը կը բարեխօսի, ուր հարկն է, Օրդուբաթը գաւառական քաղաք դարձնելու: Շարուրի նման մի գիւղ, ասում է մեր թղթակիցը, քաղաք դարձաւ, չը նայելով որ այդ գիւղի բնակիչները միջոց ունեն կառավարվել իրանց բարեբեր և ընդարձակ վարելահողերով: Օրդուբաթը ընդհակառակն շատ աղքատ է:

Օրդուբաթից մեզ գրում են որ այդտեղ սկսել են բաժանորդագրութիւն հաւաքել (Ժուրնալ ՂՕրիան) լրագրի համար:

ՄՕՁԴՕԿԻ մեր թղթակիցը գանգատուած է որ առուստրը այդ քաղաքում շատ ընկած է: Եւ այնպէս չէր էլ կարող լինել, աւելացնում է մեր թղթակիցը, քանի որ քաղաքը մնացել է 55 վերստ հեռու երկաթուղու գծից, իսկ խրաքանչիւր բնակիչ, որ 200 ռուբլ ունի, սկսում է պարագել առուստրով: Այդպիսով բազմանում են այնպիսի վաճառականներ, որոնք ոչ մի գաղափար չունեն առուստրի վրա: Երկվայ սայլապանը և կոչկարը այսօր դուքանդար են դարձել: մի քանի ամիս առետուր են անում, ապառիկ են տալիս ապրանքի կէսը, իրանց պարտքերը վճարելու համար դրամ չունենալով, սկսում են աւելի էժան ծախել ապրանքը, քան թէ աւել են և յետոյ փակում են խանութը:

Ինչպէս ուրիշ շատ տեղերից, այնպէս էլ ԱՎԱՐԵՆԱՊՈՒՍԻՑ համակրութեամբ լի նամակներ ենք ստանում ձեռնարանի մասին (Մշակ) մէջ

տպած առաջնորդող յօդուածների առիթով: «Չեր այդ յօդուածները, գրում է մեզ մեր թղթակիցը, այնպիսի մեծ համակրութեամբ ընդունվեցան, որի մասին հեռուից գաղափար կազմելը դժուար է:»

Պ. Պետրոս Գանջուհեանց գրում է մեզ ՄՕՁԴՕԿԻՑ հետեւալը: «Չեր լրագրի № 162 մէջ գրած էր, որ իբր թէ ես իմ կալուածների 50 հազար ռուբլ եկամուտը խոստացել եմ մահվանիցս յետոյ կտակել Մօզզոկի երկսեռ դպրոցներին, ուր պէտք է հայոց լեզուով դաստասերութիւն լինի և որ աղայոց դպրոցը կրելու է իմ անունը, իսկ օրիորդականը կողակցիս անունը: (Մշակ) № 176 մէջ պ. Ս. Մ. պատշաճաւոր կերպով ցոյց տուեց այդ լրի սխալ լինելը: Բայց ինձ անձամբ անձանթ մի լրատու Խ. Գ., չը բաւականանալով (Մեղուի) № 204 մէջ պ. Ս. Մ-ի ասածները հերքելով, պնդում է, իբր աղայոց իր գրածները որ ինքն նոյն իսկ իմ բերանիցս է լսել մի քանի այլ անձանց ներկայութեամբ իմ դիտաւորութեան մասին կտակելու եմ կարողութիւնս յիշեալ դպրոցներին: Պարտք իմ համարում յայտնել հրապարակաւ որ ես իմ հայրենիք ոչ ոքին չեմ ներկայացրել և այդպիսի խօսք կամ խոստում ոչ ոքի առջև չեմ արել, ուր մնաց Խ. Գ-ի ներկայութեամբ, որին ես բոլորովին չեմ էլ ճանաչում: Ինձ անձանթ պարտքը կամեցել է, երբի, իմ մէջ զցել բարեգործութեան ձգտումը, զարթոնել իմ մէջ այն միտքը, որ ես ժամանակով իրագործեմ: Բայց այդ տեսակ խրախուսները և չողորթիչ միջոցները ոչ թէ միայն ապարդիւն են լինում, առհասարակ, այլ և վնասակար: Իսկ ընդհակառակն, պ. Ս. Մ-ի ասածները երբեք խոչնդոտ չեն կարող լինել մի մարդու համար, եթէ նա ճշմարիտ վճած լինել և կարողութիւն ունենար բարի և ազգօգուտ գործ անելու:»

Մեզ գրում են ՇԱՆՔԱՎԱՐԻՑ, որ հոկտեմբերի 27-ին զգալի եղաւ այդտեղ երկրաշարժի զարկ: Նախ լսվեցաւ ստորերկրեայ որոտում՝ որ ուղղվում էր արեւմուտքից դէպի արեւելք:

Մեր խմբագրութեան մէջ ստացված 2 ռուբլ կօպէկներով, ասենք 3 ռուբլ, յատկացնելով Վիեննայի (Ժուրնալ ՂՕրիան) լրագրի բաժանորդական 807 ռուբլ 13 կօպ. գումարին, կունենանք այժմ մեր խմբագրութեան մէջ այդ լրագրի բաժանորդական գումար 810 ռուբլ:

ԳԱՆՁԱԿԻՑ մի քանի ժամանակ սրանից առաջ ստացանք երկու նամակներ, որոնց բովանդակութիւնը այս է: Նամակագիրները կարգաւ (Մշակ) № 180 մէջ թէ Գանձակից ուղարկել է մեր խմբագրութեանը 50 ռուբլ բաժանորդագին (Ժուրնալ ՂՕրիան) համար, զարմանում են, որովհետեւ, ինչքան նրանց յայտնի է այդ քաղաքում բաժանորդագրութիւնը Վիեննայի Փերանսական լրագրի համար հասել էր 93 ռուբլ գումարի: Նամակագիրները հայել են պահանջում այն պարունակից, որոնք փող են ժողովել յիշեալ նպատակով:

Պ. Գրիգոր Վարձեկեան հրատարակել է նորերումս «Բաւարական խնդիրներ» վերնագրով գիրքը հայերէն լեզուով: Գրքի մի օրինակը մենք չնորհակալութեամբ ստացանք հեղինակից, կամ հրատարակից, որ պ. Բ. Դանիւրեանն է: Գիրքը տպւած է թիֆլիսում, Միխայիլով տպարանում և արժէ 40 կօպէկ: Գրքի վրա տպւած է 1882 թիւը: Նշանակում է Դանիւրեանի լրագրական գործակալութեան մէջ, թիֆլիսում:

Մայրաքաղաքի ռուս լրագիրներում տեսնում ենք յայտարարութիւններ (Голосъ) և (Русскій Купецъ) լրագիրների, որոնք եկող 1882 թվ. յունվար ամսից կը սկսեն նորից հրատարակվել:

Գաւառական մեր թղթակիցներից ոմանք մի նոր ձե են հնարել իրանց թղթակցութիւնները տպել տալու մեր լրագրի էջերում: Նրանք ուղարկում են մեզ մի որ և է յօդուած կամ լուր և նամակի մէջ ներփակում են և մի 7 կօպէկա-

նոց փաստի զրօշ (մարկա), որպէս զի յօդուածը կամ լուրը անպատճառ տպենք և (Մշակ) այն համարի մի օրինակը, որտեղ տպւած կը լինի այն նամակը կամ լուրը, փաստով ուղարկենք նրանց: Բայց ի դուր են անում պարունակը այդ տեսակ բան: Եթէ նամակը կամ լուրը չեն կարող տպվել, թէ կուզ հարկը մարկա էլ ուղարկեն, զարձեալ չի տպվի նրանց ուղարկած գրութեամբը:

Մականաւոր (Ջանգեզուր) գաւառի Ե. Գիւղի տանուտէրը պահեց իր 12 տարեկան աղային գիւղի ծխական քահանայի 16 տարեկան աղջկայ հետ: Տանուտէր և քահանայ գիւղի ինտելիգենցիա են, և անա նրանք են այդ տեսակ հրէշաւոր պատկերների օրինակ ցոյց տալիս միւս գիւղացիներին:

Հարցնող լինի թէ ինչ նպատակով Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրատարակում է ամիսը երկու անգամ առաջին հարկաւորութեան մթերքների տակաւ, երբ այդ տակաւն թէ հայ գործ դրվում Այն գներով, որոնք նշանակվում են վարչութեան կողմից մի փոքր ի շատ օրինաւոր միւս էլ անհնարին է ճարել ամբողջ թիֆլիսում: Երբ որ միւս ծախողներին տակաւայ մասին էք խօսում, նրանք ձեր երեսին ծիծաղում են:

ԻԿԴԻՐԻՑ մեզ գրում են: «Չը նայելով որ իգգիրի երկսեռ դպրոցները նիւթական մեծ կարօտութիւն են զգում, այնու ամենայնիւ ժողովուրդը անտարբեր է դէպի իր զաւակների ուսումը: Խորհուրդ ենք տալիս իգգիրներին որ իրանց գիւղի աւելի քան 30 հատ գինեւորներ փակեն, հասարակական վճիռ կայացնեն և այդ բոլոր գինեւորներից մի գինեւորն դարձնեն և տան նրան կապալով յօգուտ երկսեռ դպրոցների: այն ժամանակ դպրոցները ապահով դրութեան մէջ կը լինեն:»

Մեր թղթակիցներից ոմանք գիւմում են մեզ. խնդրելով որ վերադարձնենք նրանց իրանց յօդուածները: Մենք յօդուածները վերադարձնելու օրովորութիւն չունենք և դա մեզ անհնարին էլ է, որովհետեւ ինչզգված ենք ամեն կողմից ստացվող նիւթերով:

ՍՈՒԽՈՒՄԻՑ մեզ գրում են: «Ոչտեղ հանգիստից հոկտեմբեր ամսին մի խումբ հայ գաղթականներ, բոլորն էլ,—մարդ, կին, երեխաներ, գլխոված, բոքիկ, մաշված, զինված դէմքերով, կենդանի դիակների պէս նրանք հինգ ամիս առաջ Միւսայից գաղթելով Սուխում, բնակվել են Ակոպա և Կուսմա գիւղերում, բայց չը դիմաւորվել այդ տեղերի կլիմային, այժմ նիւթական ամեն միջոցներից զուրկ, վերադառնում են իրանց հայրենիքը: Շատերը նրանցից մնաւ, չը դիմաւորվել կլիմային: Շրջակայ մի քանի գիւղերում դեռ եւս մնում են մի քանի ընտանիքներ: Նրանք էլ գարնանը դիտաւորութիւն ունեն վերադառնալ թիւրքիս:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՖԻՆԱՆՍԱ

Պատգամաւորների ժողովի նիստը նոյնիւր բերի 9-ին գլխաւորապէս զբաղված էր Ֆերիի ճառով: Տունիսի գործերի մասին: Նա մասնաւորց առաւ, որ ընդգիծադրականները կամենում էին զեղծուածից ցոյց տալ, բայց նրանք չը կարողացան այդ անել: Ֆերիի մանրամասնաբար հերքեց կլեմանսի մեղադրանքները: «Եթէ պատգամաւորների ժողովը, հաւանութիւն տալով ամփրիկական սահմանների պաշտպանութեանը, ի նկատի ունէր միայն խրոմիրներին պատժել, ուրեմն ի՞նչի նա չը բողոքեց կառավարութեան դէմ, երբ Փրանսիական զօրքերը զրաւեցին Բեզկրտա և Գարես:» Ֆերիի

բողոքեց մինիստրութիւնը քննութեանը ենթարկելու դէմ և վերջացրեց իր ճառը, արդարացնելով կառավարութեանը: Այնուհետեւ հարցը վերջացնելու համար բազմաթիւ առաջարկութիւններ եղան, որոնցից ոչ մէկը չընդունվեց, մինչև որ Գամբետա եկաւ ժողովը և խօսք խնդրեց: «Ես կարծում եմ, ասաց նա, որ մենք չը պէտք է վերջացնենք վիճարանութիւնները, խօստովանելով մեր անգործութիւնը: Ես մտադիր չեմ խօսել, որովհետեւ ծանօթ չեմ թէ արշաւանքի սկսելու և թէ նրան շարունակելու գործի հետ: Բայց ես կարծում եմ, որ մենք աւելի ընդարձակ նպատակ ունենք, քան թէ մինչև այժմ առաջարկվածները, մենք պէտք է իրագործենք կատարաւոր դաշնագիրը, որի տակ Ֆրանսիան ստորագրել է ևս հետեւեալն եմ առաջարկում: Պատգամաւորների ժողովը անցնում է հերթական գործերի, հաստատ վճելով իրագործել մայիսի 12-ի դաշնագիրը: Այդ առաջարկութիւնը ծափահարութիւններով ծածկվեցաւ և ընդունվեցաւ 379 ձայների մեծամասնութեամբ 81-ի դէմ:»

Նախագահ Գրեվիի «Paix» լրագիրը ներկայում է, որ Գամբետայի առաջարկութեան ընդունելը նոր մինիստրութեան առաջին գործն էր: Տունիսի հարցի մասին վիճաբանութիւնների ժամանակ ժողովի նըպատակն էր այնպէս գործել, որ Թիւրքի չը կարողանայ Գամբետայի մինիստրութեան անգամ լինել: Մինչև Գամբետայի գալը ժողովի մէջ խառնակութիւն էր տիրում: Մեծամասնութիւնը ոչ մի առաջարկութիւն չէր ընդունում: Գամբետայ յի առաջարկութիւնը այնպիսի նշանաւոր մեծամասնութեամբ ընդունվեցաւ, որ ապագայ մինիստրութիւնը մեծ նշանակութիւն ստացաւ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական լրագիրներից շատերը ստանութեամբ ընդունեցին իշխան Բիսմարկի հրաժարականի կարելութեան լուրը: «National Zeitung» լրագիրը արտատպել է «Post» լրագրի հաղորդութիւնը առանց որ և է աւելուածի, իսկ «Berliner Tageblatt» լրագիրը նկատում է, որ այդպիսի փորձերը հասարակական կարծիքի վրա ազդելու համար այլ ևս նպատակ չեն հասնում և որ վերջին ընտրութիւնների ժամանակ հարցը ուղղակի էր դրված: «յօգուտ թէ հակառակ Բիսմարկի» և բաւական պարզ պատասխան ստացվեցաւ ընտրողներից: Առաջագէտների մի քանի լրագիրներ չեն հաւատում, որ իշխան Բիսմարկի սպանւալիքը իրագործվի: Նրանց կարծիքով, պետական կանցլէրը մտադիր է արձակել նոր լայնատաղը և կրկին ընտրութիւններ նշանակել: Իշխան Բիսմարկի մեծ ունի, որ գերմանական ընտրողները այլ ևս համարուհ չեն լինի ընդգիծադրականների հետ, եթէ նրանք առաջուց իմանան, որ իշխան Բիսմարկ հրաժարական կը տալ: Եթէ լայնատաղի մէջ իր սեփական մեծամասնութիւն չունենայ, «Post» լրագրի մէջ բացի դանդաղները ժամանակակիցների անշուրհակալութեան դէմ և բացի յարձու մուշները ազատամիտների վրա, ծանր մեղադրանքներ են բարձրած առաջագէտների վրա, որոնք իբր թէ «լիշեամի են միտքաւորական համոզմունքներին և իրանց նպատակներին հասնելու համար միջոցների մէջ ընտրութիւն չեն անում:» Այդ մեղադրանքները հերքվում են ազատամիտ մամուլից: Ընդգիծադրող գործիչները պնդում են, որ